ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/179

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.11.2018թ. թիվ 27/26-3/21031-18 գրությամբ «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության 08.11.2018թ. թիվ 40/11-6170 գրության հիման վրա, 19.11.2018թ. թիվ 27/26-3/21031-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/179 ընթացակարգի շրջանակներում 23.11.2018թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.11.2018թ. թիվ 40/11-6170 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի և «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ի միջև 27.04.2018թ. կնքված «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Ընկերության կողմից «խտացրած կաթ, շաքարով» ապրանքատեսակը, «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ի կողմից, ենթարկվել է լաբորատոր փորձաքննության և համաձայն 02.08.2018թ. թիվ 670 փորձարկման արձանագրության՝ «խտացրած կաթ, շաքարով» ապրանքատեսակը չի համապատասխանել պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրի պահանջներին: ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը 06.08.2018թ. թիվ Ե-40/11-4089 գրությամբ դիմել է «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ին անհամապատասխան ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխանող ապրանքով փոխարինելու պահանջով: «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ն, համաձայն Պայմանագրի 2.4.2 կետի, պարտավոր էր ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հիմնարկներ մատակարարած տեխնիկական բնութագրին չհամապատասխանող 2535,76 կգ «խտացրած կաթ, շաքարով» ապրանքատեսակը, ողջամիտ ժամկետում, փոխարինել Պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքով: Դրանից հետո Ընկերությունը մի քանի անգամ «խտացրած կաթ, շաքարով» ապրանքատեսակի նմուշներ է ներկայացրել

Պատվիրատուին, սակայն այդ նմուշները նույնպես չեն համապատասխանել պահանջներին: 23.10.2018թ. Ընկերությունը գրավոր դիմել է Պատվիրատուին, 10 օր ժամանակ խնդրելու առաջարկով, որպեսզի «խտացրած կաթ, շաքարով» ապրանքատեսակի ներմուծողների և տեղական արտադրողների շրջանակներում կատարի հարցումներ և ձեռք բերի տեխնիկական բնութագրին համապատասխանող «խտացրած կաթ, շաքարով» ապրանքատեսակը, սակայն այդ ժամանակը նույնպես լրացել է, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի «ա» ենթակետը՝ Պատվիրատուն 07.11.2018թ. միակողմանի մասնակի լուծել է վերը նշված Պայմանագիրը՝ 19 535,62 կգ «խտացրած կաթ, շաքարով» ապրանքատեսակի մասով, որի ընդհանուր գումարը կազմում է 14 046 892 ՀՀ դրամ: 19535,62 կգ-ը դա Պայմանագրի շրջանակներում «խտացրած կաթ, շաքարով» ապրանքատեսակի դեռ չմատակարարված քանակի և ՀՀ ԱՆ ՔԿ հիմնարկների պահեստներում առկա, սակայն Պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող քանակների հանրագումարն է (16999,86 կգ+2535,76 կգ):Նշված գումարի չափով Պայմանագրի միակողմանի մասնակի լուծումից հետո՝ «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-1» ծածկագրով պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 81 053 108 ՀՀ դրամ:

Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը համաձայն Պայմանագրի 6.3 կետի, տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու համար, Ընկերությունից գանձվելու է տուգանք՝ Պայմանագրի գնի 0.5 տոկոսի չափով, որը կազմում է 475 500 ՀՀ դրամ (95100000 դրամ x 0.5%), տուգանքը հաշվանցվելու է Ընկերությանը վճարման ենթակա գումարներից, ինչպես նաև Ընկերությունից կգանձվի նաև Պայմանագրի կատարման ապահովման գումար՝ որպես պայմանագրի կատարման ապահովում (տուժանք) 1 797 600 ՀՀ դրամի չափով:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.4.7 կետը, Ընկերությունը պարտավոր է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հիմնարկներից ետ վերցնել իր կողմից մատակարարված, սակայն Պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող 2535,76 կգ «խտացրած կաթ, շաքարով» ապրանքատեսակը, որի գումարը՝ 1823313 ՀՀ դրամը, նույնպես պետք է պահվի Ընկերությանը վճարման ենթակա գումարներից:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/179 ընթացակարգի շրջանակներում 23.11.2018թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը.

4. ՍՑ-ԱՄ-2018/179 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/179 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ի միջև 27.04.2018թ. կնքվել է ապրանքի մատակարարման թիվ «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-1» ծածկագրով պայմանագիր:

2. Ընկերությանն ուղղված 07.11.2018թ. թիվ 40/11-6142 գրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետ և 2.1.7.1 կետի «ա» պարբերությունը, 07.11.2018թ. միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը 19535,62 կգ «խտացրած կաթ, շաքարով» ապրանքատեսակի մասով:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.11.2018թ. թիվ 27/26-3/21031-18 գրությունը, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության 08.11.2018թ. թիվ 40/11-6170 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ

որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 405-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ի միջև 27.04.2018թ. կնքվել է ապրանքի մատակարարման թիվ «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-1» ծածկագրով պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը («Բիզնես Թրենդ» ՍՊԸ) պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասեով Գնորդին (ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի հավելված 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 12-րդ կետի համաձայն՝ «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ն պարտավորվել է 2018թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում մատակարարել համապատասխանաբար՝ 8000 կգ, 8000 կգ և 9000 կգ «խտացրած կաթ շաքարով» ապրանքատեսակը: Կողմերի միջև 28.09.2018թ. կնքված թիվ 1 համաձայնագրով 2018թ. 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարման ենթակա ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգվել է մինչև 30.10.2018թ.:

Համաձայն գործում առկա «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ի կողմից 02.08.2018թ. տրված թիվ 670 փորձարկման արձանագրության՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից 20.07.2018թ. ներկայացված «խտացրած կաթ, շաքարով» ապրանքատեսակի նմուշի փորձարկման արդյունքում արձանագրվել է, որ այն յուղի առկայության մասով չի համապատասխանում ներկայացված տեխնիկական բնութագրին:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ին ուղղված 06.08.2018թ. թիվ 40/11-4089 գրությամբ ներկայացրել է «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ի կողմից 02.08.2018թ. տրված թիվ 670 փորձարկման արձանագրությունը՝ Ընկերությանը տրամադրելով ողջամիտ ժամկետ (15 օր) մատակարարված և ՀՀ ԱՆ ՔԿ պահեստում առկա «խտացրած կաթ շաքարով» ապրանքատեսակն անհատույց փոխարինելու տեխնիկական բնութագրին համապատասխան նոր խմբաքանակի ապրանքով:

Պատվիրատուին ուղղված 23.10.2018թ. գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ Պայմանագրով նախատեսված «խտացրած կաթ շաքարով» ապրանքատեսակի մատակարարման հետ կապված խնդիր է առկա այն պատճառով, որ ապրանքատեսակի

պիտակում նշված բաղադրությունը համապատասխանում է պայմանագրի տեխնիկական բնութագրին, սակայն փորձաքննությամբ պարզվել է, որ այն իրականությանը չի համապատասխանում: Ընկերությունը պարտավորվածություն է հայտնել ՔԿ հիմնարկներում առկա խմբաքանակները փոխարինել նոր տեխնիկական բնութագրին համապատասխան խմբաքանակներով: Ընկերության կողմից կատարվել և կատարվում են հարցումներ ներմուծողներից և տեղական արտադրողներից, որի արդյունքում Ընկերությանը պետք է տրամադրվեն վերը նշված տեխնիկական բնութագրով «խտացրած կաթ շաքարով» ապրանքատեսակը, որը կտարվի փորձաքննության, արդյունքից ելնելով Ընկերությունը կամ կշարունակի մատակարարել ապրանքը կամ կխնդրի միակողմանի լուծել Պայմանագիրը:

Նույն գրությամբ Ընկերությունը Պատվիրատուին խնդրել է տրամադրել ևս 10 օր ժամանակ՝ խնդրի վերջնական լուծման համար:

Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 07.11.2018թ. 40/11-6142 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը համաձայն Պայմանագրի, պարտավոր էր ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ մատակարարած տեխնիկական բնութագրին չհամապատասխանող 2535,76 կգ «խտացրած կաթ շաքարով» ապրանքատեսակը ողջամիտ ժամկետում փոխարինել Պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքով, բացի այդ Ընկերությունը 23.10.2018թ. գրավոր դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով տրամադրել 10 օր ժամանակ, սակայն ադ ժամանակը նույնպես լրացել է, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի «ա» ենթակետը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը 07.11.2018թ. միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը՝ 19 535,62 կգ «խտացրած կաթ շաքարով» ապրանքատեսակի մասով:

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.2-րդ ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի, եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման համար ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3. կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 2-րդ կետի 2.2-րդ ենթակետի 2.2.4-րդ պարբերության համաձայն՝ Գնորդն պարտավոր է ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունները հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.7-րդ ենթակետի 2.1.7.1 պարբերության «ա» պարբերության համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

Այսպիսով՝ «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ի միջև 27.04.2018թ. կնքված ապրանքի մատակարարման թիվ «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-1» պայմանագրի համաձայն պարտավորվել է մատակարարել «խտացրած կաթ շաքարով» ապրանքատեսակը: Ընկերության կողմից մատակարարված ապրանքի փորձաքննության արդյունքում պարզվել է, որ այն չի համապատասխանում Պայմանագրի տեխնիկական բնութագրին: Պատվիրատուն առաջնորդվելով Պայմանագրի պայմաններով, ծանուցել է Ընկերությանը՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ ոչ պատշաճ որակի ապրանքը ողջամիտ ժամկետում փոխարինելու համար:

Ընկերությունն իր հերթին 23.10.2018թ. դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով տրամադրել ևս 10 օր ժամանակ, սակայն նշված ժամկետը լրանալուց հետո ևս Ընկերության կողմից չի փոխարինվել անպատշաճ որակի ապրանքը տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքով:

Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի «ա» պարբերությունը, 07.11.2018թ. միակողմանի մասնակի լուծել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ի միջև 27.04.2018թ.

կնքված ապրանքի մատակարարման թիվ «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-1» պայմանագիրը՝ «խտացրած կաթ շաքարով» ապրանքատեսակի մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա հիմքերն, արձանագրում եմ, որ «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.11.2018թ. թիվ 27/26-3/21031-18 գրությամբ «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01263483) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**